Նախագիծ
Երկրորդ ընթերցում
ԼՐԱՄՇԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Խ-750[4]-30.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝

«Սույն օրենսգրքի իմաստով կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը»:

Հոդված 2. Օրենսգրքի 37-րդ հոդվածի 5-րդ մասում «189.15-րդ և 189՝16-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «189.15-րդ, 189՝16-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ 189.22-րդ, 189.23-րդ և 189.24-րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող» բառերը փոխարինել «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 189.15-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 189.15. Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը**

1. Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվություններն անկանխիկ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսունապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

3. Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.19-րդ հոդվածով.

«Հոդված 189.19 Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին ապօրինի նվիրատվություն ներգրավելը

1. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրներից կամ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող նվիրատվություն ներգրավելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության անդամի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով»:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.20-րդ հոդվածով

«Հոդված 189.20 Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը

1. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ առավելագույն չափը գերազանցող գումարի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով»:

Հոդված 7. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.21-րդ հոդվածով՝

«Հոդված 189.21՝ Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը

1. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի չափով»:

Հոդված 8. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.22-րդ հոդվածով.

«**Հոդված 189.22. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը շրջանցելը**

1. Անձի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով:

3. Անձի կողմից օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի չափով»:

Հոդված 9 . Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.23-րդ հոդվածով՝

«Հոդված 189.23՝ Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելը

1. Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից «Կուսակցությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածով արգելված պայմաններով վարկի տոկոսները նվազեցնելը կամ ավանդի տոկոսները բարձրացնելը կամ վարկը կամ դրանց տոկոսները ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո վարկի տոկոսադրույքի վերանայումը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն նվազում է կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակհայտ անհավասար այլ անձանց հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն (օրենքով չթույլատրված նվիրատվություն)՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով»:

Հոդված 10 . Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.24-րդ հոդվածով.

«Հոդված 189.24՝ Կուսակցության կողմից հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելը

1. Կուսակցության կողմից իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև ութսունապատիկի չափով»:

Հոդված 11. Օրենսգրքի 223.2-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 12. Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասում «169.28-րդ հոդվածով» բառերը փոխարինել «169.28-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ, 189.22-րդ, 189.23-րդ և 189.24-րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 13. Օրենսգրքի 302-րդ հոդվածի առաջին պարբերությունում «189.15-րդ և 189□16-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «189.15-րդ, 189□16-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ, 189.22-րդ, 189.23-րդ և 189.24-րդ հոդվածներով» բառերով»:

Հոդված 14. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ, 10-12-րդ հոդվածներն ուժի են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն օրենքի 11-12-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը սույն օրենքի 4-9-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Մինչև սույն օրենքի 11-12-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի գործերը շարունակում է քննել և լուծել Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ԽՆ-750[5]-30.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ"

«Սույն օրենսգրքի իմաստով կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը»:

Հոդված 2. Օրենսգրքի 37-րդ հոդվածի 5-րդ մասում «189.15-րդ և 189□16-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «189.15-րդ, 189□16-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ ~~և~~ 189.22-րդ, 189.23-րդ և 189.24-րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 3~~2~~. Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող» բառերը փոխարինել «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող» բառերով:

Հոդված 4~~3~~. Օրենսգրքի 189.15-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 189.15. Կուսակցությանն~~ը~~ օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը**

1. Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվություններն անկանխիկ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու ֆիզիկական անձ~~ի~~ ~~անց~~ նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսն~~ութուն~~ապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ ~~երկու~~հարյուրապատիկից մինչև երկու~~ետ~~հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու ֆիզիկական անձ~~ի~~ ~~անց~~ նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսունապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեք~~չորս~~հարյուրապատիկից մինչև չորս~~վեց~~հարյուրապատիկի չափով:

3. Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուեք հարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեքչորս հարյուրապատիկից մինչև չորսվեց հարյուրապատիկի չափով:»

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.19-րդ հոդվածով.

«Հոդված 189.19 Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին ապօրինի նվիրատվություն ներգրավելը

1. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրներից կամ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող նվիրատվություն ներգրավելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության անդամի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով»:

Հոդված 64. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.20-րդ հոդվածով

«Հոդված 189.20 Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը

1. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ առավելագույն չափը գերազանցող գումարի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելու հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով»:

Հոդված 7. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.21-րդ հոդվածով

«Հոդված 189.21. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը

1. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելու հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի չափով»:

Հոդված 87. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.22~~19~~-րդ հոդվածով.

«**Հոդված 189.22~~19~~. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված~~սահմանված~~ աղբյուրներից նվիրատվությունների արգելքը շրջանցելը**

1. ~~Նվիրատուի կողմից կ~~Անձի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը այլ անձի կողմից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի չափով:

2. ~~կամ~~ Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելու հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով:

3. Անձի կողմից օրենքով չթույլատրված~~սահմանված~~ աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձ~~ի~~~~անց~~ անունից~~կողմից~~ նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ~~իրական նվիրատուի կամ նրա պաշտոնատար անձի նկատմամբ~~՝ նվիրատվության գումարի~~սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի~~ չափով:~~, իսկ նվիրատվությունը փոխանցող անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:~~

4~~2~~. Սույն հոդվածի 3-րդ~~1-ին~~ մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելու հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝~~ իրական նվիրատուի կամ նրա պաշտոնատար անձի նկատմամբ~~՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի ~~սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի~~ չափով:~~, իսկ~~

~~նվիրատվությունը փոխանցող անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:~~

~~**Հոդված 5.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.20-րդ հոդվածով.~~

~~**«Հոդված 189.20 Կուսակցություն ապօրինի նվիրատվություն ներգրավելը**~~

~~1. Կուսակցություն օրենքով չթույլատրված աղբյուրներից կամ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող նվիրատվություն ներգրավելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության անդամի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով»:~~

Հոդված 9~~7~~. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.234-րդ հոդվածով

«Հոդված 189.234 Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելը

1. Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից «Կուսակցությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածով արգելված պայմաններով վարկի տոկոսները նվազեցնելը կամ ավանդի տոկոսները բարձրացնելը կամ վարկը կամ դրանց տոկոսները ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո վարկի տոկոսադրույքի վերանայումը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն ~~կ~~նվազում ~~էի~~ կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակհայտ անհավասար այլ անձանց ~~կամ կուսակցությունների~~ հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն (օրենքով չթույլատրված նվիրատվություն)՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով»:

Հոդված 10~~6~~. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.243-րդ հոդվածով.

«**Հոդված 189.243 Կուսակցության կողմից** հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելը մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի մասին տեղեկատվություն չներկայացնելը

2. Կուսակցության կողմից իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելը ~~մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենքով սահմանված կարգով տարեկան տեղեկատվություն չներկայացնելը~~՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև ութսունհինգապատիկի չափով:

~~3. Պետական ֆինանսավորում ստացող կուսակցության կողմից իր մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում օրենքով սահմանված տարբեր սեռի ներկայացուցիչների համամասնության խախտման մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն չներկայացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև ութսունապատիկի չափով:~~

~~4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով»:~~

Հոդված 118. Օրենսգրքի 223.2-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 129. Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասում «169.28-րդ հոդվածով» բառերը փոխարինել «169.28-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ, ~~և~~ 189.22-րդ, 189.23-րդ և 189.24-րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 130. Օրենսգրքի 302-րդ հոդվածի առաջին պարբերությունում «189.15-րդ և 189□16-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «189.15-րդ, 189□16-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ, ~~և~~ 189.22-րդ, 189.23-րդ և 189.24-րդ հոդվածներով» բառերով»:

Հոդված 141. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:~~2021 թվականի հունվարի 1-ից:~~

4. Սույն օրենքի 3~~2~~-րդ, ~~6-րդ և 8~~10-12~~9~~-րդ հոդվածներն ուժի են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն օրենքի 11~~8~~-12~~9~~-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը սույն օրենքի 4-9-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Մինչև սույն օրենքի 11-12-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի գործերը քննում և լուծում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: